*«Գրանցված է»*
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
*14 փետրվարի 2007 թ.*
*Պետական գրանցման թիվ 10207069*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

18 դեկտեմբերի 2006 թ. թիվ 234-Ն
ք. Երևան

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՀԱՐԿԱԴԻՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՆԵՐԻՑ «ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 29-35-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՐԿԱԴԻՐ ԱՃՈՒՐԴՆԵՐԻՆ ԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 12-ի «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-35-րդ հոդվածներով նախատեսված հարկադիր աճուրդների կազմակերպման և անցկացման դեպքերը սահմանելու մասին» թիվ 1495-Ն որոշման 1-ին կետի գ) ենթակետի համաձայն.

***Հրամայում եմ՝***

1. Սահմանել հարկադիր էլեկտրոնային աճուրդներից «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-35-րդ հոդվածներով նախատեսված հարկադիր աճուրդներին անցման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Դ. Հարությունյան**

Հավելված

*Հաստատված է*
*ՀՀ արդարադատության նախարարի*
*2006 թվականի դեկտեմբերի 18-ի*
*N 234- Ն հրամանով*

## Կ Ա Ր Գ

## ՀԱՐԿԱԴԻՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՆԵՐԻՑ «ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 29-35-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՐԿԱԴԻՐ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԱՆՑՄԱՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից անցկացվող հարկադիր էլեկտրոնային աճուրդներից անցումը «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ 29-35-րդ հոդվածներով նախատեսված հարկադիր աճուրդներին:

2. Հարկադիր աճուրդները կազմակերպվում և անցկացվում են Ծառայության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 12-ի «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-35-րդ հոդվածներով նախատեսված հարկադիր աճուրդների կազմակերպման և անցկացման դեպքերը սահմանելու մասին» թիվ 1495-Ն որոշմամբ սահմանված դեպքերում:

## II. ՀԱՐԿԱԴԻՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՆԵՐԻՑ ԱՆՑՈՒՄԸ ՀԱՐԿԱԴԻՐ ԱՃՈՒՐԴՆԵՐԻՆ

3. Հարկադիր էլեկտրոնային աճուրդներից անցումը հարկադիր աճուրդներին իրականացվում է Հայաստանի Հանրապետության գլխավոր հարկադիր կատարողի հրամանով:

## III. ՀԱՐԿԱԴԻՐ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

4. Հարկադիր աճուրդների անցկացման մասին հրապարակային ծանուցումը իրականացվում է Օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. Լոտը (գույքը), որի վերաբերյալ գնային հայտ չի ներկայացվել՝ հարկադիր աճուրդի է ներկայացվում հարկադիր էլեկտրոնային աճուրդում սահմանված վերջին մեկնարկային գնով:

6. Չկայացած լոտը հարկադիր աճուրդի է ներկայացվում նախորդ աճուրդի համար սահմանված գնից 10 տոկոսի չափով իջեցված գնով:

7. Լոտը (գույքը), որի վերաբերյալ գնային հայտ է ներկայացվել՝ հարկադիր աճուրդի է ներկայացվում հարկադիր էլեկտրոնային աճուրդի ընթացքում տվյալ լոտի համար առաջարկված ամենաբարձր գնով:

8. Հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասնակիցները համարվում են հարկադիր աճուրդների մասնակիցներ՝ նախավճարի առկայության դեպքում:

9. Հարկադիր աճուրդի ներկայացված Լոտը (գույքը), որի համար մեկնարկային գին է համարվել հարկադիր էլեկտրոնային աճուրդի ընթացքում տվյալ լոտի համար առաջարկված ամենաբարձր գինը, համարվում է հարկադիր աճուրդով վաճառված, եթե հարկադիր աճուրդի ընթացքում գնային հայտ չի ներկայացվել, իսկ աճուրդի հաղթող է համարվում հարկադիր էլեկտրոնային աճուրդի ընթացքում տվյալ լոտի համար ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:

## IV. ՀԱՐԿԱԴԻՐ ԱՃՈՒՐԴԻՑ ԱՆՑՈՒՄԸ ՀԱՐԿԱԴԻՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ

10. Հարկադիր էլեկտրոնային աճուրդ իրականացնող համակարգի վերականգնումից հետո Հայաստանի Հանրապետության գլխավոր հարկադիր կատարողի հրամանով՝ վերսկսվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի գործընթացը, օրենքով սահմանված կարգով:

11. Եթե լոտի վերաբերյալ մինչև հարկադիր էլեկտրոնային աճուրդի վերսկսվելը, որոշում է կայացվել հարկադիր աճուրդներ անցկացնելու մասին, ապա դրա հարկադիր էլեկտրոնային աճուրդի գործընթացը վերսկսվում է հայտարարված հարկադիր աճուրդներն անցկացնելուց հետո:

12. Վերսկսված հարկադիր էլեկտրոնային աճուրդի լոտի մեկնարկային գին է սահմանվում չկայացած հարկադիր աճուրդներից հետո օրենքով սահմանվող մեկնարկային գինը: